# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՄԻՈՒԹԵԱՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

## ԸՆԴ ՀԱՌՈՂՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

(Շարունակութիւն. էջ 185)

ԻԼՎՈՎԻՆ կամ Լվովն երկու աւուր հեռաւորութեամբ կը գտնուի Զամոյց քաղաքն՝ Խեմրթի թեմին մէջ, որ Վիսոխովեցի իշխանին կը վերաբերի, և ամուր կերպով պատսպարուած է։ Պարիսպներուն քով գեղեցիկ լիճեր ևս կը գտնուին, որոնք միանգամայն քաղաքին զարդ են։ Ունի եկեղեցի մի և երկու քահանայ։ Տէր Յովհաննէս Կիւորոբովիչ՝ այրի, 47 տարեկան, առաքինակրօն և խնայտուութեամբ զարդարուած մարդ մ'է։ Հմուտ լատին և հայ լեզուաց, նաև դրաբարի։ Շատ հմուտ գրքեր երկասիրեց գրաբար լեզուով, և սուրբ հաւատոց եռանդեամբն վառուած՝ շատ նախանձայոյզ է։ որուն ապացոյց է եկեղեցւոյ մէջ մուտքի հրաշալի կարգաւորութիւնը, ուր ժողովրդապետութեան պաշտօնը կը վարէ, և ժողովուրդն իսկ՝ իր քարոզներուն և խրատներուն պատճառաւ՝ հաւատոյ խնդրոյ մէջ շատ լուսաւորեալ է։ Մարիամ Լուդովիկէ Թագուհին՝ ուզեց դինքն ձեռնադրել տալ իբրև օգնական եպիսկոպոսի Իլվով։ Տէր Պետրոս՝ 32 ամեայ, նոյնպէս լատին լեզուի տեղեակ, հմայիրտ ուղղափառ, և մեր ղանքով քանի մի ամիս Իլվով Քահանայապետական վարժարանին մէջ սորվելով՝ քահանայ ձեռնադրուեցաւ։

Իլվով Թագաւորական և աթոռանիստ քաղաք է Ռութենաց, ուր կը նստին հայ, լատին, և յունադաւան Ռութեն արքեպիսկոպոսք իրենց օգնականներով։ Կը պատմեն ինձ ոմանք, թէ Հայոց արքեպիսկոպոսին աթոռանիստ քաղաքը Կիեւ էր, ուր արքեպիսկոպոսն ինքզինքը կաթողիկոս կ'անուանէր, Էջմիածնի կաթողիկոսին իշխանութեան ներքև, ինչպէս նաև արդ Կ. Պոլսոյ պատրիարքն, ուստի և կրնար նաև եպիսկոպոսներ ձեռնադրել։ Իլվովի արքեպիսկոպոսն այժմ իսկ ըստ ինքեան ունենար պիտի այս իշխանութիւնս։ Վասն զի խիստ դժուարին և նեղացուցիչ բան մ'է այս եպիսկոպոսաց ձեռնադրութեան խնդիրն, որք կը ստիպուին այնքան վտանգներէ անցնելով՝ ի Հայաստան ուղևորիլ։ Իսկ այն եպիսկոպոսներն՝ որոնց վրայ կասկած կայ թէ կաթոլիկ են, այլ ևս չեն վերադառնար, կամ կը դառնան՝ բոլորովին փոխուած։ Իլվովի մէջ երեք եկեղեցիք կան, այսինքն՝ Ս. Աստուածածնի Դիւթվոնան մայր եկեղեցին, որ քաղաքին մէջ տեղը կը գտնուի։ Ս. Ընծայ, Վանքի եկեղեցի կոչուածն՝ որ 'ի մուտս քաղաքին կը գտնուի, և առաջ արքեպիսկոպոսական եկեղեցի էր, և շատ կրօնաւորներ ունէր։ քովի գտնուած տուներն՝ եկեղեցւոյ կը վերաբերէին, որոնք այժմ պատերազմի պատճառաւ կործանած են։ իսկ կրօնաւորք ցիրուցան եղան, և մնացածներն իսկ մեռան։ Եկեղեցւոյ եկամուտը՝ շատ քիչ բան է, բայց քովը կը գտնուի ընդարձակ պարտէզ մի։ Ունի ևս Ս. Յակոբայ Առաքելոյն մատուռ մի, որ եկեղեցիէն բաժնուած է, և քանի մի քարեղէն և փայտաշէն բնակութիւններ ունի։ Այս եկեղեցիս՝ երկար ժամանակ երեսի վրայ թողուած էր։ և հազիւ երեք տարի վերջ, երբ Հայք Իլվով բարեկարգութիւններ ըրին, ջանացին այս եկեղեցւոյս ևս քահանայ մի կապել։ Արքեպիսկոպոսն որոշեց յա-

digitised by A.R.A.R.@

ռաջնորդութիւն այն եկեղեցւոյն զՀայր Սիմոն կրօնաւորը, ձեռնադրեալ 'ի Հայաստան, զոր վերոյիշեալ Տէր Յովհաննէսն՝ վռնտել էր Զամոսցէն, հրապարակաւ մելար կարծիքներ քարոզելուն պատճառաւ։ Բայց Տէր Սիմոն նորէն դարձաւ, և զամէնքը հաստատութեամբ շահելով և առ ինքն ձգելով յանդեցաւ, Պօղոս անուամբ Եւդոկիոյ եպիսկոպոսի մը ձեռքով, դարձեալ առաջին մոլորութիւնները մոցնել. այս պատճառաւ ձգեցին զինքը պաշտօնէն և եկեղեցին փակեցին։ Յետոյ երբ բոլորովին յայտնուեցաւ թէ մոլորութեանց հակամէտ է և զանոնք կը պաշտպանէ, և կասկածելով կա՝ թէ մոգութեան արհեստին ինքզինքը տուած է, բանտ դրին զինքը. և քանի մի շաբաթ վերջ՝ տէրութենէն դուրս մերժեցին։ Այժմ Հայաստանի վանքերու մէկուն մէջ կը գտնուի։ Ժողովրդեան զօրաւոր աղաչանաց զիջանելով, յանձնեցին եկեղեցւոյն առաջնորդութիւնը Տէր Յոհան Մարգարիտին, որ մեր կաթոլիկ վարժարանին աշակերտ էր, և քանի մի ամիս է միայն՝ որ քահանայ ձեռնադրուեցաւ և նոյն եկեղեցւոյն ժողովրդապետ անուանեցաւ։ Երրորդ եկեղեցին Ս. Խաչն է, նոյնպէս քաղաքին ծայրը, քարաշէն եկեղեցատամբ և գեղեցիկ պարտիզով. բայց խազախներու արշաւանքէն յետոյ, և դէշ ժամանակաց պատճառաւ, սկսաւ եկեղեցին քայքայիլ. և բոլորովին աւերակ կը դառնայ, եթէ չդարմանուի՝ ինչպէս ժողովուրդն կը փափաքի և չարունակ զարքեպիսկոպոսը կը մեղադրէ, որ կ'արգելու եկեղեցւոյն մէջ ջերմեռանդութիւններ կատարելու։

Իվովի մէջ հետևեալ քահանայք կը գտնուին.

Տէր Յոհան Պրոտի՝ արևելքէն եկած է, 47 ամեայ. և երեք տարի է որ այրի է, ճարպիկ և խորամանկ. 15 տարիներէ 'ի վեր աստ եկեր է. վրայի բոլոր ըզգեստներն խեղճ վիճակի մէջ են և աղքատութեան վերջի աստիճանին հասած։ Սակայն գիտցաւ ամենուն սիրտը իրեն շահիլ, այնպէս որ՝ քիչ ժամանակի մէջ մայր եկեղեցւոյն պաշտօնեայ (officialis) անուանեցաւ, և մինչև մեր գալուստը և այն եկեղեցւոյն մէջ բարեկարգութիւններ մուծանելու ժամանակը՝ դեռ այն պաշտօնը կը վարէր. բայց չուզելով այն բարեկարգութիւնները ընդունիլ՝ իրրև հերետիկոս համարուեցաւ, և արքեպիսկոպոսին սրտի ցաւով՝ ձգեցին զինքը պաշտօնէն, բռնադատեալ նաև լատին արքեպիսկոպոսէն։ Երկու տարի վերջ՝ աքսորանքէն դառնալով զղջաց իր մեղաց վրայ։ Գրեց ինձ Պիենատելլի նուիրակը ընդունել զինքը։ Խնդիրքը կատարուեցաւ մի քանի պայմաններով, բայց մանաւանդ այսու, որ հասարակաց հաւատոյ դաւանութիւն ընէ և խոստովանութիւն չի լսէ, երբ անոր գաղտնիքը չի պահէր։ Արքեպիսկոպոսին շատ սիրելի էր, ուստի և յամենայնի նորա գործակատար էր։ Սակայն միշտ կասկածելի մարդ համարուած էր, առաւել ևս այնու՝ զի հասարակութեան ձայնը կը հաստատէր, թէ ուրացող և մահմէտական է, և միշտ Հայաստանի հետ վերաբերութիւններ ունի։

Իվովի երկրորդ քահանայն է, Տէր Պօղոս Կ. Պոլսեցի, իբր 46 ամեայ, այս տեղի Հայոց արքեպիսկոպոսէն ձեռնադրեալ. կրթութեան և պաշտաճից մէջ այն աստիճանի զարգացեալ չէ և անենան մէկն է։ Երրորդ քահանայն է Տէր Աբրահամ կուսակրօն իբր 40 ամեայ, ծննդեամբ Իվովցի է։ Յառաջագոյն Պրոտքին հետ միասին՝ Երուսաղէմ կեցած է, և հոն մեր գալէն յետոյ՝ կը հաստատէր ժողովրդեան մէջ Քրիստոսի գերեզմանին վրայ առասպելական լոյս ծագելուն խնդիրը։ Արքեպիսկոպոսին խոստովանահայրն է, որուն և շատ զանց ներողամիտ կը գտնուի, չնայելով նորա անուղղայ և համարձակ գնացից։ Բայց այնու հանդերձ ժողովուրդը զինքը կը յարգէ, վասն զի շատ լաւ գիտէ եկեղեցական երգեր և երկու վերոյիշեալ քահանայից հետ ազգայնոց մեծ մասին խոստովանութիւնը կը լսէ։ Չորրորդ քահանայն է Տէր Եղիա նոյնպէս

digitised by A.R.A.R.@

կուսակրօն, յիսնամեայ և շատ երկիւղած քահանայ մ'է. գիտէ լատիներէն, արքեպիսկոպոսին քարտուղարն է և երբեմն քարոզ այլ կը խօսի. ծննդեամբ Իլվովէն է, և զանազան ուսիներու մէջ վարժարանը հաստատելու խնդրոց մասին համամիտ երևեցաւ։ Հինգերորդ քահանայն է, Տէր Յովհաննէս Բնեռարդովէն, Իլվովի հայ խորհրդականներու մէկուն հարազատ եղբայրն, և առաջին կարգի ազնուական ընտանեաց հետ ազգակից, այր՝ գեղեցիկ տեսակեամբ, իբր 36 ամեայ, գիտէ սակաւ մի լատիներէն. սակայն քիչ մի թեթևամիտ կ'երևի և զուրկ 'ի խոհականութենէ։ Սա ամուսնացեալ չլինելով Էլմիածնի կաթողիկոսէն ձեռնադրուեցաւ. քանի մի տարի Հայաստանի մէջ կրթուելով, կրնար նաև յիշուում ժամանակի արքեպիսկոպոս ևս լինել, որուն համար ամենայն ջանք 'ի գործ կը դնէր։ Բայց խիստ անխոհեմ բան պիտի լինէր, ամենայն մասամբ և տեսութեամբք. վասն զի բարուց կողմանէ թեթև էր, և 'ի մանկութենէ անեալ էր հակառակ հոգւով և մոլար կարծեաց կուսակից և հակամէտ կը թուէր. պէտք էր ապա ջանալ արգելուլ իւր այդ փափաքը։ Վեցերորդ քահանայն՝ է Տէր Յովհ Մաբիլովէն, Իլվովցի, 26 ամեայ արդէն իսկ մեր վարժարանին մէջ կրթուած, և մեր ջանիւք և փափաքով ձեռնադրեալ հշմարիտ ուղղափառ մ'է. թէպէտ և շատ կարողութիւն չունի գիտութեանց, բայց լատիներէն և (գրաբար) հայերէն լեզուաց բաւական հմուտ է, ինչպէս նաև բարոյական աստուածաբանութեան մէջ։ Այժմ ժողովրդապետութեան պաշտօնը կը վարէ՝ վերոյիշեալ վանէ կոչուած եկեղեցւոյն մէջ։ Եօթներորդ քահանայն է Տէր Գաբրիել Զինովէվ Իլվովցի, նախնի ընտանեացմէ յառաջ եկած. քեռորդի միոյ 'ի խորհրդականաց, որ հայերէն լեզուաւ « Եբէ-ֆրեան » կը կոչուի. և թէպէտ աղքատ ծնողաց զաւակ, սակայն երևելի աստուածաբան և հռչակաւոր քարոզիչ է Հայոց մայր եկեղեցւոյն, մանաւանդ կը ճոխանայ իւր քարոզներուն մէջ, երբ բարուց վրայ կը խօսի։ Մեծաւորութեան պաշտօն կը վարէ՝ Ոնոփրիոս անուամբ ուրիշ երիտասարդի մի հետ, որ նոյնպէս կաթոլիկ վարժարանի աշակերտ է, փոքրագոյն հայ տղայոց դպրոցի մի մէջ, որոնց հետ ամէն օր վարժարանը կու գայ, սորվեցնելով նոցա, մեր առջև, քրիստոնէական վարդապետութիւնն 'ի լեզ բարբառ։ Ապագային մէջ մեծ յոյս կու տայ, և իր առաքինութեանց և մանաւանդ խոնարհութեան համար՝ ամենուն սիրելի է. բայց հասակաւ կարճ լինելով՝ չունի արտաքսակէս փառաւոր երևոյթ։

Բաց 'ի եօթն քահանայից, կայ նաև ութերորդ մ'ևս, որ արքեպիսկոպոսին իշխանութեան ներքև չէ. վարժարանը կը բնակի, ուր ըստ յանձնարարութեան Սուրբ ժողովոյն օգտակար կը լինի իւր կարողութեան հաւասար. երբ անցեալ տարի հանապարհորդեց նա 'ի Հռովմ 12 սկուդ տարեկան թոշակ որոշուեցաւ իրեն համար։ Այժմ գրեթէ 24 ամեայ է. թէպէտ և զարմանալի կարողութիւն չունի, բայց հրեշտակային վարուք և առաքինութեամբք զարդարեալ է, նախանձայոյզ և համարձակ յայտնի ուղղափառ, որուն շատ պարտական է մեր առաքելութիւնն. վասն զի ինքն՝ եղաւ առաջին քահանայն, որ մեր գալէն վերջ, նաև ընդդէմ կամաց արքեպիսկոպոսին, կատարեց աստուածային պաշտամունքն, ըստ ուղղափառ ծիսի. այժմ ևս շատ ծառայութիւններ կ'ընէ մեզի։ Մենդեամբ Կ. Պոլսեցի է, և հինգ տարուց չաւի՝ Հաւատոփիսա վարժարանին մէջ կեցած, և Տէր Կղեմէսի աշակերտ եղած է, որով և շատ հմուտ է հայերէն գրաբար լեզուին և բարոյական աստուածաբանութեան։ Տէր Յովհ Գրիգորիա կը կոչուի նա կամ Գրիգորովէն, հօր անունն Գրիգոր լինելով. և որովհետև Հայք չունին իրենց յատուկ ազգային անուններ, այն պատճառաւ կ'առնուն զայն իրենց կնքահարցմէ կամ պապերէն, և այպէս Թորոս կամ Թէոդորոս, Ներսէս,

digitised by A.R.A.R.@

Բեռնարդ անուններէն՝ կը ծագին, Թորոսովիչ, Ներսէսովիչ, Բեռնարդովիչ և այլ սոնց նման անուններ։

Մոլտաւիոյ և Թաթարաստանի մէջ գտնուող Հայոց եկեղեցիք՝ դեռ իրենց նախկին կրօնից մէջ կը գտնուին, ինչպէս նաև արևելեան Հայաստանի ուրիշ եկեղեցիք։ իսկ Լեհաստանի և Ռուսիոյի Հայոց եկեղեցիներուն միութիւնը՝ հետևեալ կերպով կատարուեցաւ։

Շարունակելի

## ՉՈՒՐ ՋԱՆ, ԱՆՕԳՈՒՏ ՎԱՍՏԱԿ

Աբք երեք՝ հարիւր ամ լցին ի վերայ երկրի, և զամենայնն անօգուտ և ընդ վայր աշխատեցան։ Քանզի մինն կազմեաց վարմն հաւորսաց և ուռկանս ձկնորսաց. և 'ի վարձու կալաւ արս քաջս և հմուտս որսոց, և նոքաք էլ 'ի գլուխս լերանց բարձրագունից. զայնքան ժամաւ նակս ջանաց որսալ զհոգին և տանել 'ի տուն իւր, և ոչ կարաց ըմբռնել 'ի հոգմոցն, որ գային և անցանէին, և ինուլ չիչ մի փոքր՝ որ տանէր չիթ մի՝ 'ի կաթոյ անձրևին՝ որ թրջի յորժամ դիպի յերկիր։ էլ 'ի լերանց ունայն 'ի գերեզման, և ոչ եհաս ցանկութեան իւրում։

Երկրորդն կամեցաւ գիր ուսանել, և էառ բաղում սպասաւորս և անբաւ գանձս 'ի պէտս իւր, և նստաւ 'ի վերայ գետոյ միոյ, որ գայր 'ի լերանց զօրաւոր վտակաք և սաստկանայր յորձան խաղացմամբ՝ ջանար գրել ճառս ներբողեանս. և այսպէս ընդ վայր աշխատեալ յիւր ժամանակն՝ էլ և նա 'ի գերեզման դատարկ և անշահ։

Երրորդն առաւել կամեցաւ հանդիսանալ, և երկու գործս առ յանձն զի կատարեսցէ յիւր ժամանակն. այս էր նորա վաստակն. զի 'ի մէջ աւուրքն զօրաւոր և լայնալիճ աղեղամբ առնէր նետաձգութիւն արեգական, զի որոյ պատճառաւ հարեալ ըմբռնեսցէ զարեգակն, և առեալ պահեսցէ զնա 'ի պէտս անձին իւրոյ միայն։ Եւ զայն աւուրն յառաջ և յետոյ հանդրիճեալ և զպպեալ, և իբրեւ ըղսուրհանդակ քաջութեամբ թեթեւութեացս արշաւէր և վազէր ջանիւ, որպէս զի կոխեսցէ զստուերս և զշուք գլխոյն իւրոյ։ Եւ այնպէս անցին աւուրքն տրտմութեամբ, և էլ ողորմելի կենաք 'ի հող երկրի։

Ոսկեփորիկ։

digitised by A.R.A.R.@